

Ֆրանսիա-Թուրքիա հարաբերությունները ձեվավորող տեսական հիմքերը, երկկողմ հարաբերությունները կարգավորող իրավապայմանագրային դաշտը

Թոփակյան Մարիամ Մ.

Երևանի պետական համալսարան, Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի Հայաստանին հարակից և մերձավոր արտերկրի պետությունների ռազմավարական հետազոտությունների բաժին ախագ լարդրանտ, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0005-4925-2158>

mariam.topakyan@ysu.am

ՀՏԳ՝ 327; EDN: GSMJUB

DOI: 10.58587/18292437-2025.3-32

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Ֆրանսիա-Թուրքիա հարաբերություններ, իրավապայմանագրային դաշտ, անվտանգություն, ընկալումներ, համագործակցություն, փափուկ ուժ, աշխարհաքաղաքական զարգացումներ

Теоретические основы формирования франко-турецких отношений и нормативно-правовая база, регулирующая двусторонние отношения

Топакян Мариам М.

Старший лаборант Отдела стратегических исследований отношений сопредельных с Арменией государств и стран ближнего зарубежья Института арменоведческих исследований Ереванского государственного университета;

аспирант кафедры международных отношений и дипломатии факультета международных отношений, Ереванский государственный университет (Ереван, РА)

Аннотация. С 1995 года франко-турецкие отношения вступили в качественно новый этап, обусловленный как исторической необходимостью, так и актуальными стратегическими приоритетами. Этот четвертый этап характеризуется расширяющимся корпусом двусторонних соглашений, которые институционализируют и углубляют сотрудничество в ключевых сферах.

Указанные соглашения формируют стратегическую основу взаимоотношений, способствуя развитию партнёрства в культурной, политической, экономической, экологической и безопасности сферах. Всё в большей степени это взаимодействие отражает общую приверженность сторон к решению региональных и глобальных вызовов, особенно в контексте международной безопасности.

Динамика развития этих отношений также свидетельствует о целенаправленном использовании механизмов жёсткой, мягкой и умной силы, при этом двусторонние инструменты демонстрируют согласованную и ориентированную на будущее повестку, адаптированную к изменяющимся геополитическим реалиям.

Ключевые слова и словосочетания: франко-турецкие отношения, правовая договорная база, безопасность, восприятия, сотрудничество, мягкая сила, геополитические изменения

Theoretical Foundations of France–Turkey Relations and the Legal Framework Regulating Bilateral Engagement

Topakyan Mariam M.

Senior Research Assistant at the Department of Strategic Studies of Relations with Foreign Countries Adjacent and Close to Armenia, Institute for Armenian Studies, Yerevan State University, Ph.D. Student at the Faculty of International Relations, Chair of International Relations and Diplomacy (Yerevan, RA)

Abstract. Since 1995, France–Turkey relations have evolved into a qualitatively new phase, driven by historical necessity and contemporary strategic priorities. This fourth stage is marked by an expanding corpus of bilateral agreements that institutionalize and deepen cooperation across key sectors.

These agreements serve as the strategic framework of the relationship, facilitating collaboration in cultural, political, economic, environmental, and security domains. The partnership increasingly reflects a joint commitment to addressing regional and global challenges, particularly in the realm of international security.

The trajectory of these relations also reveals a deliberate blend of hard, soft, and smart power approaches, with bilateral instruments reflecting a shared, forward-looking agenda responsive to shifting geopolitical dynamics.

Keywords & phrases: France-Turkey relations, legal framework, security, perceptions, cooperation, soft power, geopolitical developments

Ֆրանս-թուրքական պատմական առնչությունները և դրանց հիման վրա կառուցված երկկողմ հարաբերությունները ժամանակի հոլովությամբ պայմանավորված բազմապիսի ներքին և արտաքին իրողություններով, բազմիցս փոփոխությունների են ենթարկվել, որոնք աշխարհաքաղաքական զարգացումների անմիջական հետևանքն ու արդյունքն են, զարգացումներ, որոնք պարզապես չէին կարող ազդեցություն չունենալ երկու երկրների միջև հարաբերությունների և դրանց հետագա ծավալման տեսլականի վրա: Ֆրանսիա-Թուրքիա հարաբերություններն ունեն տարիների ընթացքում երկկողմ նախաձեռնողականությամբ ձևավորված տեսահայեցակարգային ամուր հիմք, որի շնորհիվ երկու երկրների հարաբերություններն ընդգրկել են համագործակցության և փոխգործակցության նորանոր ոլորտներ և ուղղություններ, որոնք տարիների ընթացքում որոշակի փոփոխություններով դրսևորել ու պահպանել են իրենց զարգացման և ամրապնդման կայուն դիմանիկան:

Ըստ ֆրանսիական հանրապետության հիմնական օրենքի՝ Հինգերորդ Հանրապետության Սահմանադրության [30], որն ընդունվել է 1958 թվականի հոկտեմբերի 4-ին, «Հանրապետությունը մասնակցում է համերաշխության և համագործակցության զարգացմանը ֆրանսախոս պետությունների և ժողովուրդների միջև (հոդված 87): Հանրապետությունը կարող է պայմանագրեր կնքել այն պետությունների հետ, որոնք ցանկանում են միավորվել ու համագործակցել իր հետ՝ իրենց քաղաքակրթությունները զարգացնելու համար» [37] (հոդված 88): Ստացվում է, որ ֆրանսիական կողմն ինքնին այլ պետությունների հետ համագործակցության նախաձեռնող է՝ նախևառաջ քաղաքակրթությունների, դրանց զարգացմանը, կայուն փոխազդեցությանը հասնելու հրամայականով, դրանով հանդերձ նաև սեփական լեզվի ու դրա կիրառության՝ որպես համագործակցության շրջանակի ընկալումն ու սահմանումն է, միաժամանակ՝ արևմտյան արժեհամակարգի, գաղափարների տարածման ու ամրապնդման առաջամարտիկ է՝ հավատարիմ Սահմանադրության նախաբանում և առաջին հոդվածում շարադրված հիմնարար դրույթների [14], որոնք էլ սահմանում են ֆրանսիական փափուկ ուժի գործիքակազմը՝ սեփական լեզվի ու մշակույթի, գիտակրթական, այդ ոլորտում նաև համագործակցության հաստատման ու խթանման, տարբեր երկրների հետ միջգերատեսչական հարաբերությունների ձևավորման, հանրային դիվա-

նագիտության ամրապնդմամբ՝ պետական շարունակական հովանավորությամբ ու աջակցությամբ:

Իսկ Թուրքիայի Սահմանադրությունը սահմանում է, որ. «Հաստատելով թուրքական հայրենիքի և ազգի հավերժ գոյությունն ու թուրքական վսեմ պետության անբաժանելի միասնությունը՝ այս Սահմանադրությունը, Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Աթաթյուրքի՝ անմահ առաջնորդի և անգուգական հերոսի կողմից ներկայացված ազգայնականության գաղափարին, նրա բարեփոխումներին ու սկզբունքներին հավատարիմ, որոշում կայացնելով հասնել Թուրքիայի Հանրապետության հավերժական գոյությանը, բարգավաճմանը, նյութական և հոգևոր բարեկեցությանն ու ժամանակակից քաղաքակրթության չափանիշներին՝ որպես աշխարհի ժողովուրդների ընտանիքի իրավահավասար պատվավոր անդամի, թուրք ազգի կողմից վստահվել է ժողովրդավարության սիրահար ու ջատագով թուրք որդիների և դուստրերին՝ նրանց սերն առ հայրենիք և թուրքական ազգ» [15]: Այս ամենից էլ կարելի է ընդհանուր առմամբ պատկերացնել ֆրանս-թուրքական հարաբերությունների ամրապնդման և խորացման նախաքայլը՝ համագործակցության սկզբնավորում քաղաքակրթական երկխոսության հիմքով՝ դրանց հնարավոր ներդաշնակեցման և կայուն ու շարունակական փոխշփումների հիմքով:

Ուստի պատահական չէ, որ դեռևս 1992 թվականի ապրիլին, երբ Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանը պետական այցով գտնվում էր Թուրքիայում, Գալաթասարայի լիցեյում արտասանված իր ելույթում հայտարարեց Ֆրանսիայի և Թուրքիայի միջև մշակութային համաձայնագիր ստորագրելու մասին, ըստ որի պետք է հիմնվեր Գալաթասարայի ֆրանսալեզու համալսարանը [26]: Տարիներ անց, 2007 թվականին հիմնադրված Յունուս Էմրեի ինստիտուտը, որը զբաղվում է ամբողջ աշխարհում թուրքերեն լեզվի և մշակույթի տարածմամբ ու հանրահռչակմամբ, և համարվում է իր բնույթով թուրքական փափուկ ուժի հաստատություն, ի թիվս այլ երկրների, մասնաճյուղ ունի նաև Փարիզում, որի կողմից երկրի տարբեր շրջաններում կազմակերպվում են մշակութային բազմապիսի միջոցառումներ, թուրքական մշակույթի օրեր՝ նպատակ ունենալով ֆրանսիական հասարակության շրջանում հնարավորինս բարձրացնել թուրքական քաղաքակրթության մասին իրազեկվածությունը, ամբողջականացնել այդ ամենի վերաբերյալ գիտելիք-

ները և պատկերացումները՝ դրանով իսկ նպաստել երկու երկրների քաղաքակրթական երկխոսության ակտիվացմանը: Փրանս-թուրքական կրթական համագործակցությունը հիմնված է նաև երկլեզու կրթական հաստատությունների, դրանց շարունակական զարգացման և նոր կենտրոններով համալրման վրա (Անկարայի Շառլ դը Գոլի և Ստամբուլի Պիեր Լոտիի ավագ դպրոցը Ստամբուլում, որոնց կողքին գործում են նաև վեց մասնավոր վարժարաններ, Թեվիկ Ֆիկրետ աշխարհիկ հիմնադրամը, Կրթական և լեզվական համագործակցության առաքելություն կազմակերպությունը, Ալյանս Փրանսեզ և այլ կրթամշակութային հաստատություններ) [34]:

Փաստորեն Փրանսիա-Թուրքիա երկկողմ փոխհարաբերությունների նոր՝ ժամանակակից պատմափուլի սկզբնավորման և ըստ այդմ բազմավեկտոր համագործակցության նախահիմքը հանդիսացավ հենց այդ՝ իր բնույթով մշակութային համաձայնագիրը, որը կնքվեց 1994 թվականի հոկտեմբերի 13-ին և ուժի մեջ մտավ 1996 թվականի հունիսի 14-ին [7]՝ նախապատրաստելով երկու երկրների հետագա ակտիվ մշակութային շփումների իրավական հիմքը: Գրեթե նույն ժամանակահատվածին են թվագրվում երկու երկրների միջև կնքված համաձայնագրերը՝ տուրիզմի [2] և կինոմատոգրաֆիայի [1] բնագավառում համագործակցություն հաստատելու և դրանց հետագա խորացման վերաբերյալ: Եվ այսպես, 2008 թվականին ընդունված Պաշտպանության և ազգային անվտանգության ֆրանսիական Սպիտակ թղթում (ամբողջացնում էր 2007 թվականին ընդունված նույնանուն փաստաթղթի հիմնական դրույթները [38]) մանրամասնորեն նկարագրվում և սահմանվում են պետության ռազմավարական առաջնահերթություններն ու նպատակները, խնդիրներն ու մարտահրավերները և դրանց՝ հանրապետության արտաքին ու ներքին դրության վրա ունեցած ազդեցությունից մինչև եվրոպական անվտանգային համակարգ, հավաքական անվտանգություն, որոնց ամրապնդման և էլի ավելի կայացման գործում հիմնաքարային է Փրանսիայի դերն ու նշանակությունը, հասնելով մինչև ռազմավարական խնդիրների լուծման և քաղաքականությունների ընտրության ֆրանսիական նոր սահմանմանը՝ գիտելիք և ձգտում, կանխարգելում, զսպում, պաշտպանություն, միջամտություն, որոնցից յուրաքանչյուրը, ըստ փաստաթղթի, ենթադրում է համատեղ եռանդուն աշխատանք և համագործակցություն, որն էլ իր արտահայտությունն է ստացել փաստաթղթի երկրորդ գլխում [58, էջ 10] (ԵՄ, ՆԱՏՕ՝ որպես միմյանց փոխլրացնող կառույցներ և ենթահամակարգեր միջազգային ռազմավարական զարգացումների համատեքստում, դրանց վերափմաստավորում և վերաձևակեր-

պում՝ ֆրանսիական տեսլականով [29, էջ 47], ՆԱՏՕ-Փրանսիայի Հանրապետություն հարաբերությունների վերաբժևորում՝ և ընդհանրապես կազմակերպության, և դրա առանձին անդամ երկրների հետ մասնավորապես (Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է դեռևս 1952 թվականի փետրվարի 18-ից և ակտիվորեն ներգրավված է կազմակերպության բոլոր նախաձեռնություններում):

Ստացվում է, որ ֆրանսիական կողմը մեծապես շահագրգռված է ամրապնդելու և խորացնելու հարաբերությունները ոչ միայն ՆԱՏՕ կազմակերպության, որին փաստաթղթում տալիս է միջազգային ճգնաժամերի կենտրոնական կարգավորող գործիք բնորոշումը [56, էջ 97], այլև դրան մաս կազմող երկրների հետ, (չնայած որ յուրաքանչյուրի, այդ թվում և Թուրքիայի մասին առանձին անդրադարձ չկա և ներկայացվում են ընդհանրական իմաստով), առանց որի հնարավոր չի լինի կազմակերպության արդիականացումը և ժամանակի նոր իրողություններին համապատասխան ազդակներով արձագանքելու հնարավորության օգտագործումը: 2013 թվականին ընդունված Պաշտպանության և ազգային անվտանգության ֆրանսիական Սպիտակ թղթում հանդիպում ենք ֆրանս-թուրքական հարաբերությունների վերաբերյալ հատուկ ընդգծման, ըստ որի. «ՆԱՏՕ-ի ակտիվ անդամ Թուրքիան եզակի տեղ է գրավում Եվրոպայի անվտանգության մեջ: Իր աշխարհագրական դիրքի և պատմության շնորհիվ այն ընդգրկված է մի քանի ռազմավարական ոլորտներում: Նրա գործողություններն ու տարածաշրջանային ազդեցությունը, տնտեսական դինամիկան, արդյունաբերական և տեխնոլոգիական ներուժը և հարաբերությունների խիտ ցանցը նրա և Եվրամիության երկրների, այդ թվում՝ Փրանսիայի միջև, դարձնում են նրան արժեքավոր դաշնակից» [55, էջ 53]: Այսինքն, փաստաթղթում հանդիպում ենք Թուրքիային տրված բնորոշման՝ դաշնակից՝ “ally” տերմինով, որն առաջացել է լատինական “alligare” բառից և նշանակում է «կապել, միավորվել»՝ ինչպես անում են դաշնակից երկրները հատկապես պատերազմի ժամանակ. նրանք գործելու են միասին և պաշտպանելու են միմյանց: Կարող է օգտագործվել նաև որպես բայ, ինչը նշանակում է «միավորել ուժերը որևէ մեկի կամ որևէ քանի հետ՝ փոխշահավետության համար» [19]: Բացի այդ, եզրույթն արտահայտում է նաև հետևյալը. «Երկրի դաշնակիցը մեկ այլ երկիր է, որը համաձայնություն ունի աջակցելու նրան, հատկապես պատերազմական պայմաններում» [9]:

Մեկ այլ հայեցակարգային փաստաթղթում, որը վերնագրված է Պաշտպանության և ազգային անվտանգության ռազմավարական ակնարկ [35], և ընդունվել է 2017 թվականին (բովանդակային առումով մեծամասամբ համ-

ընկնում է 2011 թվականին ընդունված փաստաթղթի դրույթների հետ [25]), սկսվում է պետության առջև ծառայած խնդիրների ներկայացմամբ՝ արտաքին դաշտում միջազգային բազմակողմ համակարգի, դրա առանձին ենթահամակարգերի վերաբերյալ համառոտ քննության ներկայացմամբ, Ֆրանսիայի անվտանգային միջավայրի, ստանձնած բազմաբնույթ միջազգային պարտավորությունների, պետության համար հավանական վտանգ և սպառնալիք հարուցող տարածաշրջանների, առկա խնդիրների վերհանմամբ, և ներքին դաշտում պետության ներպետական խնդիրների, սպառնալիքների սահմանմամբ, որոնք ընդգրկում են ժողովրդագրական հիմնախնդրից մինչև տեխնոլոգիական առաջընթաց և այլն, ու հիմնական կենտրոնացումը, ինչպես նախորդ փաստաթղթում, կայացվում է իր և ընդհանուր շահ ունեցող պետությունների հետ համագործակցության խորացմամբ և երկկողմ, և բազմակողմ մակարդակներում՝ հնարավորինս ամբողջական իրականացնելու Ֆրանսիական պետության ռազմավարական նպատակները և խնդիրները [39]:

Պետք է նշել, որ փաստաթղթի երրորդ գլխում, անդրադարձ կատարելով Ֆրանսիային և նրա հետ համագործակից երկրների հետ հարաբերություններին, մասնավորապես նշված է. «*Եվրատիանյան տարածաշրջանից դուրս՝ Ֆրանսիան պահպանում է անվտանգային գործընկերությունը և պաշտպանական համաձայնագրերը, ինչպես նաև տեղակայված ուժեր ունի Միջին Արևելքում և Աֆրիկայում: Այս ներկայության արդյունքում Ֆրանսիան կարող է սպալինել իր անվտանգային գործընկերներին և աջակցել այն կառույցներին, որոնք բարելավում են իր ուժերի արձագանքը: Ֆրանսիան պահպանում է փոխադարձ պարտավորությունները, որոնք ենթադրում են նման հարաբերությունները, որից հետո ըստ տարածաշրջանների ներկայացվում է ֆրանսիական կողմի հետ ունեցած հարաբերությունները և դրանց մակարդակը» [23, էջ 61], որից անմիջապես թվարկվում են ներկայացվում են համապատասխան տարածաշրջանները և պետությունները, ֆրանսիական կողմի համար դրանց կարևորությունը: Նկատելի է, որ այդ ցանկում հատուկ ընդգծմամբ արձագանք և նշում չկա թուրքական կողմի վերաբերյալ, կրկին, ինչպես նախորդ փաստաթղթում, ընդգծումը ոչ հասցեական է: Ենթադրելի է, որ այդ ամենը կապված է դեռևս 2017 թվականից Ֆրանսիա-Թուրքիա հարաբերություններում ամենատարբեր հարցերի շուրջ կողմերի միջև նկատվող անվստահության աճի և բազմաբնույթ հակասությունների հետ [36], որոնք արմատական ազդեցություն ունեցան ֆրանս-թուրքական փոխգործակցության ընդհանուր ընթացքի և դրա հետագա դինամիկայի վրա:*

Այսօր Թուրքիայի արտաքին գործերի նախարարության արտաքին քաղաքականության բաժնի եվրոպական երկրների հատվածում կարելի է տեսնել Ֆրանսիայի վերաբերյալ թուրքական կողմի ընկալումը. «*Ֆրանսիան կարևոր առևտրատնտեսական գործընկեր է, ինչպես նաև Թուրքիայի առաջատար դաշնակիցներից մեկը, որը հիմնված մեր վաղեմի հարաբերությունների վրա և իր տարածքում հյուրընկալում է ավելի քան 650 հազարանոց թուրքական համայնք*»: Այստեղ ևս ակնատես ենք լինում դաշնակից բառի գործածությանը, տերմին, որը ներառում է երկու երկրների միջև հարաբերությունների ողջ պարունակությունը՝ ձևակերպված երկկողմ պարտավորությունների և միասնական գործունեության շուրջ համաձայնության վրա, և ըստ այդմ դրանց մակարդակը:

Քննության առնելով թուրքական կողմի հայեցակարգային փաստաթղթերը (1997 [18], 2000 [43], 2007), կարելի է ասել, որ ընդհանուր ռազմավարական խնդիրների և նպատակների սահմանումից հետո բոլոր փաստաթղթերում ներկայացվում էր Թուրքիայի արտաքին և անվտանգային քաղաքականությունը, դրանց առաջնահերթությունները: Պետք է նշել, որ ըստ թուրքական հայեցակարգային փաստաթղթերի՝ ազգային անվտանգությունն ու հավաքական անվտանգությունն անվտանգային ընդհանուր հայեցակարգի երկու հիմնական փոխկապակցված հիմնայուններն են, և գլոբալիզացիայի դարաշրջանում անվտանգության ներկայիս միջավայրն էլ ավելի է ամրապնդել դրանց միջև եղած կապը և հաստատել, որ անվտանգությունն իր բնույթով իսկապես անբաժանելի հասկացողություն է՝ իր բոլոր մակարդակների ընդգրկմամբ [33], որոնք, կառուցվել էին այնպիսի կարևոր տարրերի վրա, ինչպիսիք են այլ երկրների հետ համագործակցության ու գործընկերության ձևավորումը և կայացումը, բարեկամական հարաբերությունների հաստատման անհրաժեշտությունը, երկկողմ և բազմակողմ հարթակներում թուրքական շահերի պատշաճ ներկայացումը և այն, որպես ՄԱԿ-ի հիմնադիր անդամ, ՆԱՏՕ-ի և եվրոպական բոլոր առաջատար հաստատությունների անդամ և ԵՄ-ի հետ (հաճախ թուրքական աղբյուրները Ֆրանսիա-Թուրքիա երկկողմ հարաբերությունների սկզբնակետ [22] են համարում 1963 թվականին կնքված Անկարայի համաձայնագիրը, որով ստեղծել համագործակցության շրջանակ Թուրքիայի և Եվրամիության միջև [10], իսկ Եվրամիության հետ մաքսային միություն է մտել 1996 թվականին [11]) բանակցող երկիր լիարժեք անդամակցության համար (ներկայացվում է որպես ամենաարևելյան եվրոպական և ամենաարևմտյան ասիական երկիր, որը նպատակ ունի ամրապնդել իր առկա ռազմավարական հարա-

բերությունները և հաստատել նոր հարաբերություններ: Եվրամիության լիիրավ անդամակցությունը շարունակում էր մնալ ռազմավարական գերակայություն, միաժամանակ ասվում էր, որ Թուրքիան Եվրոպայի մի մասն է, և ի թիվս այլ երկրների, եվրոպական գրեթե բոլոր ինստիտուտների, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության հիմնադիր անդամ է, ակտիվորեն մասնակցում է բազմաթիվ մարտահրավերների լուծման համատեղ ջանքերին, որպես Էներգետիկ հանգույց և տարանցիկ երկիր՝ կենսական դեր խաղում եվրոպական և համաշխարհային Էներգետիկ անվտանգության մեջ [38, էջ 30]), իր գոյության առաջին շրջանից վարել էր նախաձեռնողական արտաքին քաղաքականություն՝ իր տարածաշրջանում և դրանից դուրս բարեկամություն և համագործակցություն զարգացնելու համար [10, էջ 29]: Ինչպես Ֆրանսիական հայեցակարգային փաստաթղթերի դեպքում, այստեղ ևս պատկերը համանման է. անմիջական անդրադարձ Ֆրանսիական չկա կողմի հետ հարաբերություններին և դրանց բնույթին, բայց ինչպես Ֆրանսիական փաստաթղթերի դեպքում, այստեղ ևս մեծ նշանակություն է տրվում Թուրքիայի հարաբերություններին ՆԱՏՕ կազմակերպության, ինչպես նաև անդամ բոլոր պետությունների, այդ թվում և Ֆրանսիայի հետ:

1996 թվականի սեպտեմբերին երկրների միջև ստորագրվեց ծովային համագործակցության համաձայնագիրը [6], որով կողմերը նախանշեցին հարաբերությունների ընդլայնումը և փոխգործակցության խթանումը ծովային ոլորտում՝ դրանք կայուն համագործակցության մշտական զարգացմամբ ապահովելու ցանկությամբ՝ նպաստելով նաև առևտրատնտեսական կապերի շարունակական ամրապնդմանը [7]:

Ֆրանս-թուրքական՝ իր կարևորությամբ հաջորդ համաձայնագիրը շրջակա միջավայրի պահպանության շուրջ համագործակցության համաձայնագիրն էր, որը կնքվել է 1997 թվականի մարտին և ուժի մեջ է մտել նույն թվականի սեպտեմբերին [3], այսպիսով, երկու երկրների փոխգործակցությունը սկսեց ներառել նաև բնապահպանական ոլորտը, իսկ 1999 թվականի սեպտեմբերին երկու երկրների կառավարությունների միջև կնքվեց միջուկային Էներգիայի խաղաղ օգտագործման զարգացման համաձայնագիրը [4], որն ուժի մեջ մտավ 2011 թվականին: Ըստ համաձայնագրի՝ կողմերը պետք է համագործակցեն խաղաղ նպատակներով ատոմային Էներգիայի օգտագործման ու դրա շարունակական զարգացման ոլորտում՝ (ի դեպ, երկու երկրները ստորագրել են ՄԱԿ-ի գինաթափման կոմիտեի կողմից մշակված բազմակողմ միջազգային ակտը՝ Միջուկային զենքի չտարածման

մասին պայմանագիրը [41], Ֆրանսիան համարվում է հինգ միջուկային պետություններից մեկը [12]): Այսպիսով, համաձայնագիրն արտացոլում է Միջուկային զենքի չտարածման մասին պայմանագրի չորրորդ հոդվածն ընդհանրապես, և «...Պայմանագրի բոլոր մասնակիցները պարտավորվում են աջակցել միջուկային Էներգիան խաղաղ նպատակներով օգտագործելու հետ կապված սարքավորումների, նյութերի, գիտական և տեխնիկական տեղեկատվության հնարավոր առավել լիարժեք փոխանակմանը և իրավունք ունեն մասնակցելու փոխանակմանը» [12] դրույթը մասնավորապես:

Ֆրանսիա-Թուրքիա երկկողմ փոխհարաբերությունների տեսահայեցակարգային հիմքի կարևորագույն բաղադրիչներից է 2000 թվականի հունվարին կնքված Ռազմական և պաշտպանական համագործակցության մասին շրջանակային համաձայնագիրը [8], որի նախաբանում հակիրճ նախապատմությամբ ներկայացվում է երկու երկրների՝ միմյանց հանդեպ ստանձնած պարտավորությունները՝ միջազգային (նրանց անդամակցությունը Հյուսիսատլանտյան դաշինքին, դրա շրջանակում իրականացված և իրականացվելիք նախաձեռնություններին և ծրագրերին երկու երկրների ներգրավվածությունը, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) շրջանակներում ընդունված համաձայնագրերից և փաստաթղթերից բխող պարտավորությունները, (Հելսինկյան եզրափակիչ ակտ, Փարիզյան խարտիա և այլն), ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունում ներկայացված սկզբունքներին և նպատակներին համապատասխան գործելու պատասխանատվությունն ու պարտավորությունը և այլն) ու երկկողմ համաձայնագրերով և պայմանագրերով (հատուկ հիշատակման են արժանի երկու երկրների միջև կնքված Պաշտպանական նյութերի ոլորտում համագործակցության վերաբերյալ 1991 թվականի դեկտեմբերի 13-ին համաձայնագիրը [44, էջ 2] և 1992 թվականի սեպտեմբերի 18-ի Անվտանգության համաձայնագիրը՝ կապված սպառազինության ոլորտում գաղտնի տեղեկատվության փոխանակման հետ [13], որոնք էլ կազմեցին այս համաձայնագրի ստորագրման արդեն իսկ կայացված համաձայնությունների հիմքը), իրենց հերթին ազդեցություն ունենալով այս՝ իր բնույթով և նշանակությամբ հիմնարար համաձայնագրի կնքման գործում և բարենպաստ հիմք ապահովել դրա գործնական կենսագործման համար: Ըստ առաջին հոդվածի, համաձայնագրի նպատակը կողմերի միջև ռազմական և պաշտպանության ոլորտներում համագործակցության հաստատումն ու զարգացումն է, որն իրականացվելու էր հետևյալ

եղանակներով կայուն և մշտական փոխայցելությունների կազմակերպմամբ, համագումարների, քննարկումների, գիտաժողովների պատրաստությամբ, սպորտային, գեղարվեստական և այլ բնույթի միջոցառումների նախատեսմամբ, ինչպես նաև սպառազինությունների և ռազմական տեխնիկայի բնագավառներում գործակցության նոր ձևերի մշակմամբ ու ներդրմամբ, նախկինների ամրապնդմամբ, որոնց իրականացումը պետք է դրվեր համատեղ գործող Պաշտպանության համագործակցության բարձրագույն կոմիտեի վերահսկողության տակ (հոդված 3-4) [17]: Այսինքն, տվյալ համաձայնագիրը մի կողմից իրավական ձևակերպում էր տալիս երկու երկրների միջև արդեն իսկ առկա ռազմական հարաբերություններին ու կայացված պայմանավորվածություններին, որոնք արդեն իսկ կողմերի միջև ձևավորել և ամրապնդել էին ամուր փոխվստահություն, համատեղ աշխատանքի պատրաստականություն, նոր շունչ հաղորդում տվյալ ոլորտին վերաբերող կնքված երկկողմ համաձայնագրերին, մյուս կողմից՝ համագործակցությունը դարձնում էր առավել ընդգրկուն, հաշվի առնելով նաև կողմերի բազմապիսի շահերն ու հետաքրքրությունները, որոնց իրագործումն ու իրականացումը նախևառաջ կապված է պաշտպանության և այդ ոլորտում երկու երկրների ակտիվ համագործակցության հետ՝ լիարժեքորեն արձագանքելու և ակտիվ մասնակցություն ունենալու աշխարհաքաղաքական հնարավոր զարգացումներին և փոփոխություններին՝ ի նպաստ ընդհանուր շահի և նպատակի՝ իհարկե սեփական հետաքրքրությունների բավարարման և նպատակների կենսագործման ակնկալությամբ:

Ուստի պատահական չէ, որ 2011 թվականի հոկտեմբերին երկրները ստորագրեցին անվտանգության վերաբերյալ համագործակցության նոր համաձայնագիր, որը մասնավորապես ենթադրում էր պայքար Քրդստանի աշխատավորական կուսակցության (ԶԲԿ) անդամների դեմ, ովքեր վերսկսել էին պայքարը Թուրքիայի դեմ [28]: Անկարայում ստորագրված այդ համաձայնագիրը նախատեսում էր նաև, որ երկու երկրները ներգրավվեն «օպերատիվ համագործակցության մեջ ահաբեկչության դեմ պայքարում», ինչը պետք է թույլ տար, որ Թուրքիայի և Ֆրանսիայի անվտանգության ուժերն ընդհանուր պայքար մղեն ահաբեկչական գործողությունների և դրանց իրականացնողների, տվյալ պարագայում՝ Քրդստանի աշխատավորական կուսակցության զինյալների դեմ: Պարզ է, որ այս բոլոր համաձայնագրերի կնքումն ուղեկցվելու էր և իր հերթին խթանելու էր երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների սերտացմանը և աշխուժացմանը, որն էլ հենց դրանց կնքման հիմնական

շարժառիթն ու շարժիչ ուժն էր՝ աստիճանաբար դառնալով Ֆրանսիա-Թուրքիա հարաբերությունների ամենակայուն բաղադրիչներից մեկը: Այդ ոլորտում կապերի ու համագործակցության խորացումը հանգեցրեց կողմերի միջև ներդրումների փոխադարձ խրախուսման և դրանց պաշտպանության մասին համաձայնագրի կնքմանը, որը տեղի ունեցավ 2006 թվականի հունիսին [5]: Համաձայնագիրը սահմանում էր, որ կողմերից յուրաքանչյուրը խրախուսելու է իր տարածքում մյուս կողմի ներդրողների կողմից կատարված ներդրումները, ստեղծելու է այդ ներդրումների համար բարենպաստ պայմաններ՝ հատուկ երաշխիքների տրամադրմամբ (հոդված 3), որոնք կհամապատասխանեն իրենց օրենսդրություններին, ինչպես նաև միջազգային իրավունքի հիմնարար նորմերին և սկզբունքներին՝ որպես արդյունք ունենալով երկու երկրներում իրականացված և իրականացվելիք ներդրումների լիարժեք պաշտպանությունն ու անվտանգությունը: 2010 թվականի սեպտեմբերին հրապարակվեց Ֆրանսիայի արտաքին և եվրոպական գործերի նախարարի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարի համատեղ հայտարարությունը՝ կապված Ֆրանսիայում Թուրքիայի հոգևոր առաջնորդների ընդունելության հետ [16]:

Դեռևս 1924 թվականին Թուրքիայում ստեղծվել էր Կրոնական գործերի վարչությունը (թուրքերեն՝ Diyanet İşleri Başkanlığı [21]), որի հիմնական պարտականություններն են Իսլամի հավատալիքների, երկրպագության և էթիկայի հետ կապված գործերի կատարումը, հասարակությանը՝ իսլամական կրոնի վերաբերյալ գիտելիքների տրամադրումը և սրբազան երկրպագության և հավատքի վայրերի ղեկավարումը: Վարչության տնօրինության և վերահսկողության տակ են գտնվում նաև այսօր Ֆրանսիայում գործող շուրջ 270 մզկիթները, վճարում է այդտեղ աշխատող մոտ 150 թուրք իմամների աշխատավարձերը [32], որոնց մուտքը և գործունեությունը երկրում իրավական ձևակերպում էր ստացել փաստորեն դեռևս 2010 թվականին [16, էջ 16]:

Ֆրանս-թուրքական բազմակողմ փոխգործակցության նոր ուղղություն և ոլորտ նախանշեցին երկու երկրների միջև կնքված 2011 թվականի մարտին Էլբիստանի ջեռուցման ցանցի նախագծի [5] և 2014 թվականի հունիսին Էներգետիկ ոլորտում համագործակցության մասին [21] համաձայնագրերը: Ստացվում է, որ երկրներին միավորեց նաև Էներգետիկ ոլորտում հաստատված համագործակցությունը, որը նաև փոխշահավետ էր. Էներգետիկ ոլորտը ֆրանսիական ընկերությունների համար շատ յուրջ ներուժ ուներ և այսօր ևս ունի. սպասվում էր, որ Թուրքիան տասը տարվա ընթացքում կդառնար

Եվրոպայի երրորդ ամենամեծ սպառողը, և մինչ այդ տվյալ ժամանակահատվածում Թուրքիայի կառավարությունը նախատեսում էր տարածաշրջանում կառուցել մի շարք ստոմակայաններ՝ կախվածությունը թուլացնելու համար նավթի և գազի ներկրման հաշվին [29]: Այսպես, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի այցը Թուրքիա 2014 թվականի հունվարի 27-28-ն առաջին պետական այցն էր Ֆրանսիայից Թուրքիա [27]: Ինչպես հաղորդում են փաստերը, այցի ընթացքում ստորագրվել են թվով 13 ոլորտային համաձայնագրեր, այդ թվում՝ երկու երկրների արտգործնախարարների կողմից ստորագրված «Թուրքիայի և Ֆրանսիայի միջև համագործակցության ռազմավարական շրջանակ ստեղծելու մասին» համատեղ հռչակագիրը, որն ինստիտուցիոնալ հիմք է ստեղծել երկկողմ հարաբերությունների ամրապնդման համար՝ բարձրացնելով դրանք նոր մակարդակի, որի տրամաբանական շարունակությունը հանդիսացավ 2014 թվականի հոկտեմբերի 10-ին Թուրքիայի արտգործնախարարի՝ մայրաքաղաք Փարիզ կատարած այցի ընթացքում ստորագրված Համատեղ հռչակագրի իրականացման երկու տարվա (2014-2016 թթ.) «Գործողությունների ծրագիրը» [20]:

2020-2024 թվականների ընթացքում Ֆրանսիայի և Թուրքիայի միջև ձևավորված համագործակցային ձևաչափը, չնայած քաղաքական բազմաբևեռությանը և պարբերական լարվածություններին, հատակ դրսևորվում է մի շարք ոլորտային համաձայնագրերում, որոնցից հատկապես կարևոր են էներգետիկ (BOTAS–TotalEnergies) [31], պաշտպանական (ՀՕՊ համակարգի վերաբերյալ պաշտպանական համագործակցություն [23]) և կլիմայի վերաբերյալ փոխըմբռնման հուշագիրը [24]: Այս երեք համաձայնագրերը, առաջին հայացքից բաշխված տարբեր ոլորտների վրա, իրականում փոխկապակցված են Ֆրանսիայի և Թուրքիայի միջև նոր «պրագմատիկ փոխհարաբերությունների» շրջանակում:

2021 թվականի փետրվարին Թուրքիան վավերացրեց Ֆրանսիայի հետ կնքված միջազգային համաձայնագիրը, որը վերաբերում էր ֆրանսիական կրթական հաստատություններում թուրքերենի ուսուցման խթանմանը [42]: Այս համաձայնագրի նպատակն էր խթանել մշակութային փոխանակումն ու ամրապնդել թուրքական համայնքի կապը ֆրանսիական հասարակության հետ: Այսպես, Թուրքիայի համար սա նաև փափուկ ուժի կիրառման հերթական ձև է՝ Ֆրանսիայում՝ Եվրոպայում իր ներկայությունն ու ազդեցությունը շարունակապես ամրապնդելու ուղղությամբ: Նախ՝ 2024 թվականին ստորագրված BOTAS–TotalEnergies գազի մատակարարման երկարաժամկետ համաձայ-

նագիրը վկայում է Թուրքիայի աճող դերի մասին՝ որպես էներգետիկ կարևորագույն հանգույց և մատակարար՝ մի պահի, երբ Եվրոպան փորձում է նվազեցնել իր կախվածությունը ռուսական գազից: Ֆրանսիան այս համաձայնագրի միջոցով ոչ միայն ամրապնդում է իր էներգետիկ կայունությունը, այլև ամրապնդում է տնտեսական ներկայությունը տարածաշրջանում: Սակայն էներգետիկ համագործակցությունը չէր կարող զարգանալ առանց անվտանգության երաշխիքների: Հենց այդ տրամաբանությամբ է կարևորվում Ֆրանսիա–Թուրքիա պաշտպանական համաձայնագիրը՝ ՀՕՊ համակարգի վերաբերյալ պաշտպանական համագործակցության վերաբերյալ, որը ոչ միայն բարձր տեխնոլոգիական փոխանակման հարթակ է, այլև վստահության վերականգնման փորձ՝ ՆԱՏՕ-ի ներսում մի շարք տարածայնություններից հետո:

2021 թվականին ստորագրված Կլիմայի վերաբերյալ փոխըմբռնման հուշագիրն ընդգծում է նաև, որ Փարիզը Թուրքիայի հետ երկխոսությունը չի կառուցում միայն անվտանգության կամ առևտրատնտեսական շահավետ հիմքի վրա, այլ ընդգրկում է երկարաժամկետ կառուցողական օրակարգ՝ կայուն զարգացման և «կանաչ քաղաքականության» շրջանակում [40]: Այդպիսով, Ֆրանսիա–Թուրքիա հարաբերությունները վերածվում են ռազմավարական շահերի խաչմերուկի, որտեղ վերնախավային քաղաքական տարածայնությունների կողքին գործում են ոլորտային համագործակցության խորը կառուցվածքներ: Ֆրանսիան և Թուրքիան աստիճանաբար ձևավորում են գործնական համագործակցության ձևաչափ, որի առանցքում փոխլրացվող շահերով պայմանավորված էներգետիկ, պաշտպանական և կլիմայական նախաձեռնություններն են:

Ամփոփելով պետք է նշել, որ երկու երկրների հարաբերությունների տեսահայեցակարգային հիմքում իրենց հիմնարար դերն ու նշանակությունն ունեն զարգացման հաջորդական պատմափուլերում կնքված երկկողմ համաձայնագրերը, պայմանագրերը և այլ տիպի փաստաթղթերը, որոնք նախանշեցին երկու երկրների համագործակցությունը մշակութային, ռազմաքաղաքական, առևտրատնտեսական ոլորտներից մինչև շրջակա միջավայրի պահպանության, ահաբեկչության դեմ պայքարի ուղղություններով, որոնցում փոխգործակցությունն իր բնույթով ընդգրկում և ենթադրում է միջազգային անվտանգության, դրա առանձին բաղկացուցիչների, ինչպես նաև սպառնալիքների և մարտահրավերների դեմ համատեղ պայքար: Այսօր էլ, Ֆրանսա-թուրքական հարաբերությունները շարունակում են մնալ բարդ ու փոփոխական՝ միաժամանակ ուղեկցվելով ոլորտային համագործակցության հնարավորու-

թյուններով, որոնք ժամանակի ընթացքում կարող են վերածվել կառուցողական երկխոսության և փոխադարձ վստահության ամրապնդման հիմքի:

Օգտագործված գրականության ցանկ

1. Accord cinématographique entre les gouvernements de la République française et de la république de Turquie, <https://basedoc.diplomatie.gouv.fr/exl-php/cadcgp.php?>.
2. Accord de coopération en matière de tourisme entre le gouvernement de la République française et le gouvernement de la république de Turquie, <https://basedoc.diplomatie.gouv.fr/exl-php/cadcgp.php?>.
3. Accord de coopération entre le gouvernement de la République française et le gouvernement de la république de Turquie dans le domaine de l'environnement, <https://basedoc.diplomatie.gouv.fr/exl-php/cadcgp.php?>.
4. Accord de coopération entre le gouvernement de la République française et le gouvernement de la République turque pour le développement des utilisations pacifiques de l'énergie nucléaire, <https://basedoc.diplomatie.gouv.fr/exl-php/cadcgp.php?>.
5. Accord entre le gouvernement de la République française et le gouvernement de la république de Turquie sur l'encouragement et la protection réciproques des investissements (API) entre la France et la Turquie, <https://basedoc.diplomatie.gouv.fr/exl-php/cadcgp.php?>.
6. Accord maritime entre le gouvernement de la République française et le gouvernement de la république de Turquie, https://basedoc.diplomatie.gouv.fr/exl-php/util/documents/accede_document.php?1616593086576.
7. Accord sous forme d'échange de lettres relatif au protocole annexe à l'accord du 14 avril 1992 entre le gouvernement de la République française et le gouvernement de la république de Turquie relatif à l'établissement d'enseignement intégré de Galatasaray, <https://basedoc.diplomatie.gouv.fr/exl-php/cadcgp.php?>.
8. Accord-cadre entre le gouvernement de la République française et le gouvernement de la république de Turquie relatif à la coopération militaire et de défense, <https://basedoc.diplomatie.gouv.fr/exl-php/cadcgp.php?>.
9. Ally definition and meaning, <https://www.collinsdictionary.com/dictionary/english/ally>.
10. Ankara Anlaşması Tam Metni, 13.02.2017, <https://web.archive.org/web/20170306032714/http://vatandas.uk/2017/02/13/ankara-anlasmasi-tam-metni/>.
11. Ankara Anlaşması Vizesiyle ilgili Avrupa Toplulukları Adalet Divanı'nın 20 Eylül 2007 tarihli Tüm ve Darı Kararı, 13.02.2017, <https://u.to/Z0hFIg>.
12. Arms Control and Proliferation Profile: France, <https://www.armscontrol.org/factsheets/franceprofile>.
13. Constitution de la République française, Préambule et Article 1^{er}, <https://www.assemblee-nationale.fr/connaissance/constitution.asp>.
14. Constitution of the Republic of Turkey, 7 November 1982, <https://www.refworld.org/docid/3ae6b5be0.html>.
15. Déclaration commune entre le ministère du redressement productif et le ministère de l'écologie, du développement durable et de l'énergie de la République française et le ministère de l'énergie et des ressources naturelles de la République de Turquie pour la coopération dans le domaine de l'énergie, <https://basedoc.diplomatie.gouv.fr/exl-php/cadcgp.php?>.
16. Décret N° 2000-1195 du 1er décembre 2000 portant publication de l'accord-cadre entre le Gouvernement de la République française et le Gouvernement de la République de Turquie relatif à la coopération militaire et de défense, signé à Paris le 13 janvier 2000, <https://www.legifrance.gouv.fr/jorf/id/JORFTEXT00000402064>.
17. Defence and National Security Strategic Review 2017, <https://www.defense.gouv.fr/dgris/politique-de-defense/revue-strategique-2017/revue-strategique>.
18. Definitions of ally, <https://www.vocabulary.com/dictionary/ally>.
19. Dışişleri Bakanı Çavuşoğlu Paris'te, <http://www.mfa.gov.tr/disisleri-bakani-cavusoglu-paris-te.tr.mfa>.
20. Diyanet İşleri Başkanlığı, <https://www.diyanet.gov.tr/tr-TR>.
21. Diyanet İşleri Başkanlığı, Namaz Vakitleri, <https://namazvakitleri.diyanet.gov.tr/tr-TR>.
22. EUROSAM, together with ASELSAN and ROKETSAN, lay the foundation of strategic cooperation in air and missile defence, 20.07.2024, <https://u.to/f0hFIg>.
23. France and Turkey: How did relations sour? 04.06.2020, <https://www.dailysabah.com/opinion/columns/france-and-turkey-how-did-relations-sour>.
24. France's National Security Strategy 2011, http://www.realinstitutoelcano.org/wps/portal/rielcano/en/contenido?WCM_GLOBAL_CONTEXT=/elcano/elcano_in/zonas_in/defense+security/dt3-2011.
25. Histoire des relations entre la Turquie et la France: Quelques dates et repères symboliques, <https://tr.ambafrance.org/Histoire-des-relations-entre-la>.
26. Hollande visit heralds a new era in Turkish-French business ties, 29.01.2014, <https://u.to/i0hFIg>.
27. **Kirişçi K.**, The transformation of Turkish foreign policy: The rise of the trading state, New Perspectives on Turkey, N° 40, Istanbul, 2009,

- https://www.esiweb.org/pdf/news_id_412_5%20-%20Article%20Kemal%20Kirisci.pdf.
28. La V^e République, <https://www2.assemblee-nationale.fr/decouvrir-l-assemblee/histoire/la-ve-republique>
 29. Long term LNG sales in Türkiye: TotalEnergies will supply 1.1 million tons per year to BOTAS for 10 years, 18.09.2024, <https://totalenergies.com/news/press-releases/long-term-lng-sales-turkiye-totalenergies-will-supply-11-million-tons-year>.
 30. Macron's War on Islamists Comes Up Against Erdogan's Soft Power, 11.10.2020, <https://www.msn.com/en-us/news/world/macron-s-war-on-islamists-comes-up-against-erdogan-s-soft-power/ar-BB1aRo5I>.
 31. **Moyeuve P.**, Les relations franco-turques dans le domaine de l'armement, Paris, 2021, <https://u.to/oUhFIg>.
 32. **Neset S.**, Turkish foreign policy: structures and decision-making processes, <https://u.to/o0hFIg>.
 33. Relations bilatérales, La coopération éducative, scientifique, culturelle et technique, <https://www.diplomatie.gouv.fr/fr/dossiers-pays/turquie/relations-bilaterales/>.
 34. **Spiegel P.**, The Importance of Hard Power, 14.09.2011, <https://carnegieendowment.org/2011/09/14/importance-of-hard-power-pub-45513>.
 35. The French White Paper on Defence and National Security 2013, <file:///D:/%D0%97%D0%B0%D0%B3%D1%80%D1%83%D0%B7%D0%BA%D0%B8/White%20paper%20on%20defense%20%202013.pdf>.
 36. The French White Paper on Defence and National Security 2017, <https://www.mocr.army.cz/images/Bilakniha/ZSD/French%20White%20Paper%20on%20Defence%20and%20National%20Security%202008.pdf>.
 37. The North Atlantic Treaty, Washington D.C., 4 April 1949, https://www.nato.int/cps/en/natolive/official_texts_17120.htm.
 38. Treaty on the Non-Proliferation of Nuclear Weapons (NPT), <https://www.un.org/disarmament/wmd/nuclear/npt/>.
 39. Turkey: Defence White Paper 2000, https://www.files.ethz.ch/isn/154907/Turkey_2000eng.pdf.
 40. Turkey: Defence White Paper 2007, https://www.files.ethz.ch/isn/154908/Turkey_makale%204.pdf.
 41. Turkey's Perspectives and Policies on Security Issues, <http://www.mfa.gov.tr/i-turkey-s-security-perspective-historical-and-conceptual-background-turkey-s-contributions.en.mfa>.
 42. Türkiye-Fransa İlişkileri, <http://www.mfa.gov.tr/turkiye-fransa-siyasi-iliskileri.tr.mfa>.
 43. Yunus Emre Enstitüsü, Paris, <https://paris.yee.org.tr/fr/haberler>.

Сдана/Հանձնվել է՝ 25.05.2025

Рецензирована/Գրախոսվել է՝ 02.06.2025

Принята/Ընդունվել է՝ 09.06.2025